ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

№ ԴԴ-3-Ե-4125

« 15 » սեպտեմբերի 2025թ.

ԳՈՌԱ ԳՐՈՒՊ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ԳՈՌ ՇԵԿՈՅԱՆԻՆ
(Հասցե՝ ՀՀ Լոռի գ.Դսեղ 12Փ Տ.9)

ԱՐՄԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՎԱՀԱՆԻ ԱՁ-ԻՆ
(Հասցե՝ ք. Երևան, Սարի թաղ 5շ., 73/1տ.)

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի և նստարանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/16» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- **ԳՈՌԱ ԳՐՈՒՊ ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում առկա դիմում-հայտարարության (Հավելված N 1) մեջ «մասնակցի ռուսերեն լեզվով անվանումն է» դաշտում նշված է մասնակցի հայերեն անվանումը, այնինչ՝ անհրաժեշտ է նշել մասնակցի ռուսերեն անվանումը:

- **Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ**-ի կողմից ներկայացված հայտում 5-րդ չափաբաժնի մասով Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ նշված է. «Գրասեղան (1600երկ.*700լ.*750բ. մմ)՝... աջ, ձախ հատվածում ամրացված 4 շարժական դարակաշար», մինչդեռ հրավերով

սահմանված է. «Գրասեղան (1600երկ.*700լ.*750բ. մմ)՝ ... աջ կամ ձախ հատվածում ամրացված 4 շարժական դարակաշար»:

Վերոգրյալով պայմանավորված, և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/16» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը առաջարկում եմ մինչև սույն թվականի **սեպտեմբերի 16-ը ներառյալ** շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում՝ հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/16» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Հովհաննիսյան
Հեռ.՝ (+374 10) 511-774